ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 68-Ն

15 նոյեմբերի 2016 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի բնակելի կառուցապատման գոտում Հր. Շահինյան փողոց թիվ 114/2 հասցեում գտնվող հողամասում առևտրի սրահ կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 008-003-0026-0011) 258.0 քառակուսի մետր հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:
2. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 70%-ի չափով՝ 95357 (իննսունհինգ հազար երեք հարյուր հիսունյոթ) դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ք. Մարալիկ